Ե-13721

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«13» 12. 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 279-24

Նախաձեռնող՝ *«ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» ՓԲԸ*
ք. Երևան, Խորենացի 33

Գործունեությունը՝ *Տաշիր համայնք, Բլագոդարնոյե բնակավայրում անասնագոմ №6-ի և կթարան №2-ի կառուցում*
Լոռու մարզ

Առդիր՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 279 - 24

«13» դեկտեմբերի 2024թ.

Լոռու մարզի Տաշիր համայնքի Բլագոդարնոյե բնակավայրում անասնագոմ № 6-ի և կթարան № 2-ի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ՇՄԱԳ հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Բլագոդարնոյե բնակավայր

Ներածական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ՝ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Լոռու մարզի Տաշիր համայնքի Բլագոդարնոյե բնակավայրի 1-ին փողոց 2/3 և 2/4 հողամասի տարածքներում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի՝ 8-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել՝ կառուցապատման նախագծային փաստաթղթերը, համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները, հողատարածքների սեփականության վկայականները՝ N 09092021-06-0048 և N 18112021-06-002

- ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N 43 տրված՝ 18.11.2022թ. և N 34 տրված՝ 11.08.2022թ.
- հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների է, իսկ նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության:

Նկարագրական մաս. Տվյալ գործունեությունը նախատեսվում է իրականացնել երկու 1.648487 հա և 8,8239 հա մակերեսներով հողատարածքներում՝ կառուցելով 6 հատ անասնագոմեր՝ համապատասխանաբար 1954քմ, 2027քմ, 1772քմ, 2992քմ, 1710քմ և 1656քմ մակերեսներով, 2 կթարաններ՝ 452քմ և 435,87քմ մակերեսներով, պահեստ՝ 1108քմ մակերեսով, 2 հատ սիլոսի հորեր՝ 645քմ և 637քմ մակերեսներով, գոմաղբի հավաքատեղի 14000խմ՝ 854քմ մակերեսով, սեպտիկ հոր՝ 10.31քմ:

Հողային աշխատանքներ կատարվելու են 16253,18քմ մակերեսի վրա: Քանի որ հայցվող տարածքի հողաբուսաշերտի հզորությունը կազմում է միջինը 30 սմ, իսկ հողային աշխատանքների ընթացքում հանվող ծավալը մոտ 4875,95խմ, ուստի նախատեսվում է հողաբուսաշերտը կտրել և պահեստավորել առանձին հատկացված վայրում, հետագայում այն օգտագործելով տարածքի բարեկարգման համար:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություններ: Ներկայացվել է գործունեության արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների բացահայտման և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումներ: Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝

- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ,
- օդային ավազան արտանետումների՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում արտանետումների, հողային աշխատանքների հետ,
- հողային, ջրային ռեսուրսների օգտագործման հետ,
- արտակարգ իրավիճակների առաջացման հետ,
- թափոնների կառավարման հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Հանրային լսումների ծանուցումը իրականացվել է համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգի: Հանրային լսումներն իրականացվել են Տաշիր համայնքի Բլագոդարնոյե բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային լսումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, Լոռու մարզպետարանի և Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմերը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Տարածքի տեղազննման աշխատանքների և դիտարկումների արդյունքում՝ տարածքի առկա վիճակի և ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության մեջ առկա են անհամապատասխանություններ՝

- Տարածքի առկա վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայել է ՇՄԱԳ հաշվետվությունում: Տարածքը արդեն իսկ կառուցապատ է՝ համաձայն տեղազննման

աշխատանքների և Տաշիր համայնքի ղեկավարին ներկայացված հարցման պատասխանի:

- Առաջին հանրային լսման ծանուցման բովանդակությունը չի համապատասխանում նախատեսվող գործունեությանը՝ ծանուցման մեջ նշվել է N 2 անասնագոմի և N 2 կթարանի կառուցում, իսկ հաշվետվության վերնագրում ներկայացված է N 6 անասնագոմի և N 2 կթարանի կառուցում: Հաշվետվության բովանդակությունում՝ 6 հատ անասնագոմի, 2 կթարանի, սիլիոսի հորերի, պահեստի կառուցման մասին է ներկայացվում:

- Նախագիծը չի համապատասխանում համայնքի կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքներին, իսկ ՇՄԱԳ հաշվետվությունը՝ նախագծին:

- Լրամշակման վերադարձված փաթեթը նախաձեռնողի կողմից պատշաճ չի լրամշակվել, չի պարզաբանվել վերը նշված անհամապատասխանությունը և չի նշվել անասնագոմերում անասնատեղերի քանակը, որի տվյալները հարկավոր էին սանիտարապաշտպանիչ գոտու չափը որոշելու համար:

Եզրափակիչ մաս

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ մասի՝ «ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Լոռու մարզի Տաշիր համայնքի Բլագոդարնոյե բնակավայրի 1-ին փողոց 2/3 և 2/4 հողամասի տարածքներում անասնագոմ №6-ի և կթարան №2-ի կառուցման աշխատանքների ՇՄԱԳ հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան